չեցին զթագաւորն, այլ նա ոչ ընկալաւ զմիջնորդութիւն նոցա։ Էին 'ի պահս և հեռացեալ 'ի հեշտալեաց մարմնականաց, և զանհնազանդսն՝ յանդիմանէին, և բազումք 'ի նոցանէ 'ի բաց եդին զզինուորական հանդերձս, և ոչ կամէին զգենուլ. այլ միայն երկաթ, մինչեւ ծանրացաւսումն լինել զօրապետաց, զի այս ամենայն սուդ և ապաշխարութիւն, էր վասն քաղաքին Երուսաղէմի և որոյ վասն համբերութեամբ տանէին վշտաց և տառապանաց ճանապարհին։

Զայսոսիկ ծանուցի ձեզ եւ առ յապայ զեղեալսն ծանուցից։ Այս է թուղթ Կաթուղիկոսին, եւ իմաստ բանից Խալֆայն, որոյ անունն է Տէր Գրիգոր որդի Վասլի։

Դարձեալ անդ՝ Գլ. ՀԲ. Էջ 124։ Արդ՝ եկն երկրորդ պատգամաւոր Կաթուղիկոսին տալ զրոյց Սուլթանին, և ասէ. թէպէտ նոքա են բազմաթիւ, այլ կարի տկարք, երիվարք և կազմածք նուազունք. զկարասիս եւ զաղիս իւրեանց բարձեալ յէջս և յանդոր դրաստս։ Ասէ դարձեալ, կայի 'ի վերայ կամրջի ուրեք, ուստի անցանէր բազմութիւն մեծ, ոչ տեսի 'ի ձեռս նոցա նիզակ եւ վահան, բայց միայն սակաւուց. 'ի հարցանելն իմ, ետուն պատասխանի եւ ասեն. օթեւան կալաք 'ի դաշտի ուրեք, որոյ օդն ապականեալ էր. 'ի պակասիլ պաշարոյ եւ փայտի այրեցաք զպատուական զէնս և զկազմածս մեր, եւ բազումք մեռան 'ի մէնջ 'ի կարօտութեան և 'ի նեղութեան մերում. զենաք զերիվարս 'ի կերակուր, եւ փոխանակ փայտի այրեցաք զգեղարդունս, զզէնս և զկազմածս մեր. (1190)։

Այլ թէ ուր թաղեցաւ մարմին Ֆրէտէրիկ կայսեր, զանազան կարծիք են առ պատմագիրս. Վարդան վարդապետ ասէ՝ թէ բերին զայն 'ի քաղաքն Սիս։ Հ. Մ. Չամչեան. թէ թաղեցին զնա յԱնտիոք Ասորւոց, իսկ պատմիչք Արաբացւոց գրեն թէ՝ զմահսեցին զմարմին նորա, և առին ընդ իւրեանս թաղել 'ի տաճարին Ս. Յարութեան, ըստ կտակին իւրոյ, որում չհասին։

Զայս նամակ հաղորդեաց մեզ 'ի Պերլինէ այրն գիտնաւոր եւ հայագէտ Պէտերման, իբր 'ի մոռացօնս եղեալ 'ի պատմչացն Հայոց, զոր ընկալեալ եդաք 'ի կարդի պատ-